

**ԽԻ՞ Ա ՄԱՐԴԸ ԿՆԿԱ ԵԴԱՀՅ ԳՆՈՒՄ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII /  
Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Ժամանակով մի քյասիք մարդ ա ըլում, սա ունենում ա մի բեխա, երեցը մոտ չի գալի, երեցը որ մոտ չգա, կնքավորը ո՞րդի կզա: — Դո՞ւ, — ասում ա երեցը, — հորդ թախմելան տվել չես, մորդ թախմելան տվել չես, հմի էլ էկել ես ասում ես՝ արի տղաս հալակ, ժամ գալու էլ իրավունք չունես:

Սա կնկա հետ մասլահաթ արավ, թե. — ԱՇ կնիկ, ո՞նց անենք, ես գնամ, բալքի մի ճշմարիտ մարդ գտնեմ:

Գնաց, մեկ-մեկ ձիհեծ ռաստ Էկավ, ասավ. — Ի՞նչ գործի կերթաս, ա՛յ մարդ:

— Թե ասեմ՝ իմ դարդին դարման անող չես, ի՞նչ ասեմ:

Թե. — Ասա՝ :

— Ես կնքավորի եմ գնում, քյասիք մարդ եմ, գալիս չեն:

— Ես կզամ, — ասավ:

Թե. — Դու ո՞վ ես:

Թե. — Ես Քրիստոսն եմ:

Թե. — Դու փալչի մարդ ես, իմ բանը չես:

— Խի՞՝, — ասում ա սա:

Թե. — Դու երեսպաշտութին ես անըմ, մեկին սիրում ես, մեկին՝ չէ, մեկին տալիս ես, մեկին՝ չէ: Էլի գնաց, մեկն էլ ռաստ Էկավ:

Ասավ. — Էղ ո լր ես գնում:

— Գնում եմ կնքավորի:

— Ես քեզ կնքավոր:

Թե. — Դու ո՞վ ես:

— Ես Եղի՛ա մարզարեն եմ:

— Պա՛, պա՛, պա՛, դու իմ բանը չես:

— Խի՞՝ :

— Դու էն մարդն ես, որ գալիս ես բարը վեր ես անըմ, ֆողի կեսը տանում ես, կեսը՝ թողը: Դու իմ բանը չես, երեսպաշտ ես, ես ճշմարիտ մարդ եմ ման գալի:

Գնաց, մեկը ջհեց:

Ասավ. — Էղ ո լր ես գնում, ա՛յ մարդ:

— Ես, — ասավ, — կնքավորի եմ գնում:

— Ես կզամ, — ասավ:

— Դուն ո՞վ ես:

— Ես Հոգեառն եմ:

— ԱՇ, քեզ կսիրեմ, — ասավ, — դու ճշմարիտ մարդ ես, քի հմար քյասիքն էլ, հարուստն էլ մեկ ա:

Ասավ. — Բա, կնքավո՞ր, տերտերը գալիս չի հալալի:

Թե. — Խի՞՝ :

Թե. — Փող ա ուզում, ես էլ ունեմ ոչ, որ տամ:

Սա հանեց ու երես:

Ասավ. — Գնա դու պատրաստութին տես, ես էլ բիկունք կզամ:

Շիկունք էկավ, բեխան կնքեցին, ռավոտը լիսացավ:

Ասավ.— Իսի<sup>9</sup> եք ըսենց քյասիբ ապրում, սանհեր:

Թե.— Մենք ի՞նչ անենք, քյասիբացել ենք, ել չենք կարում ապրուստ ձարենք:

Սա ասավ.— Իմ սանին ինձ տուր, ես տանեմ, իրեք ամսի ժամանակին ինչ պատվիրանք կտամ, կտամ:

— Դու զիտես,— ասավ,— կնքավո՞ր:

Հոգիառ առավ իրա սանին, տարավ: Շատ կացավ, թէ քիչ կացավ, տեսավ, որ ժամանակը թամամում ա:

Ռեխան ասավ.— Մի մտիկ անեմ, տենամ սա ինչ գործի ա, որ ինձ բերել ա: Տեհավ մի մարդու ոտների կոնից չըրչարում ա: Որ տեհավ՝ վախից պոռշը ձաքեց:

Կնքավորը դուս էկավ տեհավ, որ րեխի պոռշը ձաքել ա:

Ասավ.— Իսի<sup>9</sup> մտիկ անեիր:

Թե.— Ի՞նչ անեմ, կնքավո՞ր, բերել ես ու մի բանի դնում չես, ժամանակս էլ թամամում ա:

— Գնա՝,— ասավ,— ժամանակը էգուց ա թրմամում, էսօր չէ:

Էրսը էկավ, ասավ,— Կերթաս ապտեկիսանիցը դեղի շուշեք կառնես, կրերես:

— Էքէ՞ ր:

Թե.— Բերել եմ:

Թե.— Տար էն չայուց<sup>1</sup> լցրու, պրոպկեքը դի, բի՞:

Տարավ չայուցը լրցցրուց:

Ասավ.— Բերել եմ, կնքավո՞ր:

Թե.— Դու մտիկ կանես ինձ,— ասավ.— Թե զիսի վերի կոանը կլեմ՝ մոտ չզաս, որ նրան տանիլ պտիմ, որ ոսի կոանը ըլեմ, ինչ ուզում ես՝ ուզե, եղ դեղիցը կտաս՝ կլավանա:

Էս տղեն էկավ քաղաքը, սկսեց հեքիմութին անելը: Զենը զնաց թազավորին, եղ թազավորն էլ էն հանգի քաֆուր թազավոր ա ըլել, որ հեքիմը բշարել չի՝ զլուխը կտրել, գձել ա հորը:

Նազըրնին ասին, թէ.— Ֆիլան քյասիբի տղեն լավ հեքիմութին ա անըմ:

Մարդ դրկեց, կանչեց:

— Քյասիբի տղա,— ասավ,— կարա՞ս ինձ թափես:

Թե.— Կթափեմ:

— Որ կարաս ոչ, զլուխդ կկտրեմ, ֆորը կզձեմ:

Մտիկ արավ տղեն, տեհավ, որ հոգիառ ոտների կոանն ա, ասավ.— Կթափեմ, որ կթափեմ:

— Որ թափես, քու քաշովը մին ոսկի կրտամ, մին արծաթ, թէ չթափես՝ զլուխդ կկտրեմ, էն ֆորը կզձեմ:

Սա թափեց, առողջացավ:

Բերուց սրան մի քաշ ոսկի էրետ, մեկ քաշ արծաթ:

Էս տղեն էկավ տուն, իրեն հմա ամարաթնի շինեց:

Հերն ու մերն ասին.— Այ որդի, մենձացել ենք, ծերացել, մենք էլ մին ուրախութին տենանք, արի քեզ պսակենք:

Տղեն ասավ.— Չկել իմ կնքավորին տենամ ոչ, ես պսակվիլ չեմ:

Վեր կացավ զնաց իրան կնքավորին զտավ, ասավ.— Իմ մահը ինչո՞վ ա:

Ասավ.— Ասիլ չեմ:

Թե.— Իսի<sup>9</sup> ասիլ չես:

Թե.— Ասեմ էլ անիլ չես, էլ ի՞նչ ասեմ:

<sup>1</sup> Գետ—Ծ. Բ.:

Սա որ շատ զռռեց, ասավ.— Որ պսակվես, ին ժամանակ որ յորդանը քաշես վրեղ՝ ֆոքիդ պտի տաս:

— Թե պսակվեմ ո՞չ:

— Թե պսակվես ոչ, թեզ օլում<sup>2</sup> չկա:

Սա էկավ իրա հորն ու մորը նաղլ արավ, թե կնքավորը ըսենց ասավ:

Տերն ու մերն ասին.— Կնքավորին միննաթ կանենք, մեր ֆոքին կտանք:

Բերին որդուն պսակեցին, գնաց որ տեղը մտավ, կնքավորը էկավ, վերի կուրը կտրեց, ասաց.— Էկել եմ, ի՞նչ ես ասրմ:

Նա հորն ու մորը ձեն էրետ, թե.— Կնքավորը էկել ա հրես:

Էկան ընդի, թե.— Մենք մեր ֆոքին կտանք:

Կնքավորը, որ զոռ արեց, բղավեցին.— Չէ՛, չէ, ում հմա էկել ես, նրանցը տար:

Տղեն ասավ.— Էղ որ իմ հերն ու մերը խափեցին ինձ, առ իմ ֆոքիս:

Հստի կնիկը դարուլ չարավ, նշանածին ասավ.— Դու հերիմութին ես անըմ, ֆոքի էս ազատում, ես իմ ֆոքին կտամ:

Ասավ.— Իմ ծնողնին որ ինձ դիմիշ չարին, դու էլօղի՝ դիմիշ կանե՞ս:

Կնիկը դարձավ կնքավորին, ասավ.— Ես իմ ֆոքիս կտամ սրա տեղ, իմը առ:

Ասավ.— Լա՛վ:

Կնիկը էրեսին խեշը հանեց, կոները խաչեց, խտոր ընկավ:

Հոգիառը չանցյալը քցեց քաշեց, սանամերն ասավ.— Կնքավո՞ր, դու իմ՞ ես ինձ չարշարելով տանում, չէ՞ որ ես ինքնակամ իմ ֆոքիս տվի: Էնենց տար, որ ես չիմանամ:

Կնքավորը դարձավ ասեց.— Եփ որ հերն ու մերը չղմշեցին իրենց տողի համար իրենց ֆոքին, դու ինքնակամ քու ֆոքիդ տվիր, ել ըստուց եղը քարին, ջրին օլում կլի, ձեզ օլում ըլի ոչ գնացեք, ձեզ հմա ապրեցեք:

Հստի, ըստուր հմա, մարդը թողում ա հորն ու մորը, գնում կնգա եղնիցը:

<sup>2</sup> Սահ—Ծ. Բ.: